

այդ պահը դիտողներ էին՝ չազատէին զինքը, որոնք արագ յարձակումով աւագակները զոհարեցրեցին իրենց տիրոջ: Քրիստոնեան այսպէս դարձաւ արքունիք պատիւներով: Ապպասի անոր պատիւն աւելցնելը զայն նշանակելը հրամանատար, այնքան ծանրացաւ այս յաղթականին տկար հոգւոյն վրայ, որ Շահին համակրանքը աւելի վայելելու համար ուրացաւ իր հաւատքը, և եղաւ անհաւատ, թէեւ շատ արցունք թափուեցաւ իր ազգակիցներէն զինքը այդ մտքէն ետ կեցընելու համար: Բայց տես իր հաւատուրացութեան վերջը. Շահը, թէեւ պատճառ ունէր զայն պատուելու անոր թաթարաց դէմ ունեցած յաջողութեանց համար, այլ նախանձը (կամ աւելի լաւ է ըսել զերագոյն վրէժխնդրութիւնը) այնպէս խայթեց ծեր Ապպասը որ առանց որեւէ ծանօթ պատճառի կամ ուրիշին ըսելու իր պատճառը, հրամայեց Լալապէկին զանիկա զլխատել, երբ որ ան իր բարեբախտութեան համար օրօր կ'երգէր» (էջ 147):

Մագանտարանի երբեմնի զլխաւոր քաղաք Ամուլի մասին խօսած ատեն «քաղաքը այնքան բարգաւաճ է, կ'ըսէ, որ, ոչ նուազ քան 3,000 ընտանիքներ հոն կը բնակին: Անոնք այն ատեն քանի մը ազգերու խառնուրդ էին, Հայեր, Սկիւթացիներ, Պարսիկներ, Հրեաներ, Քիւրտեր, Պանիաներ, Հնդիկներ, և Մոսկովներ, որոնք թէեւ քանի մը լեզուներու Բարբելոն մը կը ձեւացնեն, սակայն կը բնակին համերաշխութեամբ»: (էջ 178)

Երկու խօսք ալ Գավրէթի մասին ըսելէ վերջ կ'աւելցընէ Շամախի (= Sumachy, Shamakie) «բաղկացած 4,000 տուներէ կամ ատոր մօտ, լաւ բնակուած և լաւ յաճախուած Ռուս և Հայ վաճառականներէ, անկէ ըլլալով դէպի Գազուին ուղին» (էջ 197):

1628 Յուլիս 23ին այս արտակարգ դեսպանութեան գլուխը գտնուող Գեսպան Sir Dodmore Cotton կը մեռնի (Sir Robert Sherley ալ 11 օր առաջ մեռած էր) Գազուինի մէջ: «Մեր պարտականութիւնը մեզի կը հրամայէր զինքը թաղուած տեսնել կարելի եղած լաւագոյն կերպով. Հայոց գերեզմաններուն մէջ հանգստարանի մը տիրացանք, որոնք նաեւ իրենց քահանաներով և ժողովրդով շատ ազնւութեամբ եկան օժանդակել արարողութեան: Իր ձին (որ կ'առաջնորդուէր) թաւշեայ թամբ և ծածկոց ունէր իր կոնակը, իր դագաղը ծածկուած էր կարմրագոյն մետաքսէ վերարկուով (սեւը նկատի չեն առներ), աստառուած ծիրանագոյն քաֆրայիով, դագաղին վրայ դրուած էր իր աստուածաշունչը, սուրբ և զլխարկը: Մր. Հէճրս, Մր. Սթօտարթ, Մր. Էմբրի, Մր. Մօլամ, թարգման Տիք, և իրեն հետեւողներէն անոնք որ առողջ էին ներկայ գտնուեցան, նաեւ Տքթ. Կոխ, իր լորտութեան քահանան թաղեց զինքը, ուր իր մարմինը կը հանգչի յարութեան յոյսով» (էջ 209):

Այս վկայութեանէն կը տեսնենք թէ Գազուինի մէջ 1628ին կար կարելոր Հայ գազութ մը, եկեղեցի, գերեզմանատուն, քահանաներ: Գեսպանութեան միւս անդամները աւելի բախտաւոր չեղան, անոնցմէ մեծ մասը ճամբան մեռան, հուսկ Հէրպէրթ ալ ծանր կերպով հիւանդացաւ, այս պատճառով 300 մղոնէ աւելի ճամբորդութեան մը մանրամասնութիւնները կը պակսին: Ան իր հիւանդութեան մասին խօսած ատեն կ'ըսէ. «Ունէի ինծի խնամք տանող Հայ մը Մակար անուամբ և թաթար կին մը» (էջ 221):

Ահա այսքան Հէրպէրթի ուղեգրութեանէն Պարսկահայոց մասին: